«Սալահէտտին Սէյրէքթուլյահը (Խօմէրին մզկիթը) կը տեսնէ հոն իրենց կրօնքին համեմատ յարգութիւն տալէն զկնի. երբ ժամանակ դուրս կ'ելնէ՝ կը տեսնէ որ նոյն իրենց տաճարին դիմացը երեւելի եկեղեցի մը կայ. — այս ո՞ւր է, կը հարցնէ Հայրապետին (Աբրահամ պատրիարքի). նա ալ կ'ըսէ թէ՝ — Մէրեէմ Աննային ծնողացը տունն է և Յովակիմ–Աննա կը կոչուի: Կը դառնայ բարկութեամբ մը պատասխանել, թէ՝ — ես որուն անուամբը կառուցուած ըլլալը չեմ հարցներ քեզի, այլ ո՞ր ազգինն է այդ եկեղեցին՝ որ համարձակեր է մեր տաճարին (Հարէմի Շէրիֆին) դրան դէմ հոյակապ եկեղեցի կառուցանել:

Յայնժամ պատրիարքը ոտքը իյնալով մը կ'ըսէ.

— Տէ՛ր, Ազգիս Հայոց ու քու նուաստ ծառայինդ է, և եթէ արժան դատես՝ ինձ պարգեւէ, ապա թէ ոչ կամք քո է՝ որպէս կամիս նոյնպէս արա. — իսկոյն կը հրամայէ Սալահէտտին՝ որ անի սօֆտաներուն մէտրէսէ ըլլայ իր անուամբ. քանզի չէ արժան կ'ըսէ՝ մեր տաճարին դէմը եկեղեցի լինել և եթէ ես չառնում իմ յաջորդներս անշուշտ կ'առնուն. նա մանաւանդ Մար Եազուպը ձեզի բաշխեցի վասնորոյ անոր տեղ անպատճառ պիտի առնում աս, որ յաղթութեանս նշան մը ըլլայ՝ ու ինձ համար աղօթեն յիշեալ սօֆտաները: Կը սկսի սրբազան պատրիարքը դողալ ու սարսափիլ և չուարիլ (ինչպէս իր գրութենէն առնելով՝ երկու դար ու կէս յառաջ իր Ս. Երկրի Պատմութեան մէջ կը գրէ Տ. Յակոբ քահանայն Ամասիացի). «Մտածեցի թէ՝ եթէ հրաման բռնաւորին վերստին չկատարելու որ լինիմ, յայնժամ թէ Ս. Յակոբ ձեռացնուս պիտի երթայ, և թէ Յովակիմ–Աննան, ապա ուշի եկեալ մտածեցի թէ զինչ արարից. ուստի երկու չարեաց փոքրագոյնն է ընտրելի ասելով՝ երբ բռնաւորն թախանձեաց վերստին, իսկոյն առաջի նորա անկայ՝ և ասացի՝ կամք քոյին տէրութեանդ է. զայս ասելով յանձնեցի տունն Յովակիմ–Աննայի. և այս եղեւ ՈԼՋ. հոկտ. Ժ. թուականին»: Որ անկից, այսինքն 1187 թուականէն մինչեւ 1856 թուականին որ ըսել է՝ 669 տարի՝ Սալահիէսսին Սէյրէկեսի կամ Սալահիյէ կը կոչուէր, նոյնիսկ Յովակիմ–Աննայի տունը:

Թէպէտ երբեմն ՌՀԸ թուին, այսինքն՝ 1629 ամին, նոյն Յովակիմ–Աննայի եկեղեցւոյն հարաւային կողմը գտնուած մատուռը՝ ուր Սուրբ Կուսին Ծննդեան տեղն է. լատինք կարացին